

1969 թ.-ին Հ.Այգենկը հրատարակում է իր նոր հարցարանը՝ «Այգենկի անձնային հարցարան» անվանման տակ (*Eysenck Personality Questionnaire - EPQ*), որը նախատեսված է էքստրա-ինտրավերսիայի, նեյրոտիցիզմի և փսիխոտիզմի ախտորոշման համար: Հարցարանը բաղկացած է 101 հարցից, որոնցից յուրաքանչյուրին անհրաժեշտ է տալ «այո/+» կամ «ոչ/-» պատասխանը:

Տվյալների մշակումը

Ստացված արդյունքները համադրվում են թեստի «բանալու» հետ և ամեն մի համընկնման համար հաշվարկվում է 1 բալ: Այնուհետև ստացված բալերը գումարվում են իրար:

Բանալին

| | |
|---|---|
| Էքստրավերսիա-ինտրավերսիայի սանդղակ | «այո/+» պատասխաններ – 1, 5, 10, 15, 18, 26, 34, 38, 42, 50, 54, 58, 62, 66, 70, 74, 77, 81, 90, 92, 96: «ոչ/-» պատասխաններ – 22, 30, 46, 84: |
| Նեյրոտիցիզմի սանդղակ | «այո/+» պատասխաններ – 3, 7, 12, 16, 20, 24, 28, 32, 36, 40, 44, 48, 52, 56, 60, 64, 68, 72, 75, 79, 83, 86, 89, 94, 98: |
| Փսիխոտիզմի սանդղակը | «այո/+» պատասխաններ – 14, 23, 27, 31, 35, 47, 51, 55, 71, 85, 88, 93, 97: «ոչ/-» պատասխաններ – 2, 6, 9, 11, 19, 39, 43, 59, 63, 67, 78, 100: |
| Անկեղծության սանդղակ | «այո/+» պատասխաններ – 13, 21, 33, 37, 61, 73, 87, 99: «ոչ/-» պատասխաններ – 4, 8, 17, 25, 29, 41, 45, 49, 53, 57, 65, 69, 76, 80, 82, 91, 95: |

Ցուցանիշները

| | | |
|---------------------------------|---|------------|
| Էքստրավերսիա-ինտրավերսիա | <i>էքստրավերսիա</i> | 16 և բարձր |
| | <i>միջին ցուցանիշներ</i> | 7-15 |
| | <i>ինտրավերսիա</i> | մինչև 7 |
| Նեյրոտիցիզմ | <i>հուզական անկայունություն (անկայունություն)</i> | 17 և բարձր |
| | <i>միջին ցուցանիշներ</i> | 8-16 |
| | <i>Հուզական կայունություն</i> | մինչև 8 |
| Փսիխոտիզմ | <i>միջին ցուցանիշներ</i> | 5-12 |
| Անկեղծություն | <i>ոչ հուսալի տվյալներ</i> | 11 և բարձր |
| | <i>նորմալ</i> | մինչև 11 |

Տվյալների մեկնաբանությունը

Այգենկը անձի կառուցվածքում առանձնացնում էր երեք հիմնական գործոն.

1) **Էքստրավերտիա-ինտրավերտիա:** Բնութագրելով տիպիկ **էքստրավերտին** Այգենկը նշում է վերջինիս շփվողականությունն ու ուղղվածությունը, միտվածությունը դեպի «դուրս». Էքստրավերտին բնորոշ է ծանոթությունների լայն շրջանակը և շփումների անհրաժեշտությունը:

Տիպիկ էքստրավերտը գործում է պահի ազդեցության տակ. իմպուլսիվ է և բռնկուն: Նա անհոգ է, լավատես, բարեհոգի և ուրախ: գերադասում է շարժումն ու գործողությունը, ինչպես նաև նրա մոտ առկա են ագրեսիվության տենդենցներ: Հույզերն ու զգացմունքները խիստ չեն վերահսկվում, և միտված է ռիսկային արարքների: Նրա վրա միշտ կարելի է հույս դնել (На него не всегда можно положиться):

Տիպիկ **ինտրովերտը** հանգիստ, ամաչկոտ և ինքնավերլուծությանը միտված մարդ է: Նա զուսպ է և մոտ ընկերներից բացի բոլորից իրեն հեռու է պահում: Նախորոք պլանավորում և կշռադատում է սեփական գործողությունները, քանի որ չի վստահում հանկարծակի մղումներին: Լրջորեն է մոտենում որոշումների ընդունմանը: Սիրում է ամեն ինչում կարգապահություն: Վերահսկում է սեփական զգացմունքները. նրան շատ դժվար է իր ավերից դուրս հանել: Տիպիկ ինտրովերտը վատատես է և բարձր է գնահատում բարոյական նորմերը:

2) **Նեյրոտիցիզմ:** Այս սանդղակը բացահայտում է անձի մոտ հուզական կայունությանը կամ անկայունությունը:

Հուզական կայունությունը հատկանիշ է, գիծ է, որին հատուկ է կազմակերպված վարքի պահպանումը, ինչպես նաև իրավիճակային նպատակաուղղվածությունը՝ սովորական և սթրեսային իրավիճակներում:

Հուզականորեն կայուն մարդուն բնորոշ է հասունությունը, արտակարգ հարմարվողականությունը, բարձր լարվածության և անհանգստության բացակայությունը, ինչպես նաև միտվածությունը առաջնորդության և շփվողականության:

Նեյրոտիցիզմը, կամ հուզական անկայունությունը, դրսևորվում է չափազանց նյարդայնացվածությամբ, անկայունությամբ, վատ հարմարվողականությամբ, տրամադրության փոփոխականությամբ, անհանգստության և մեղավորության զգացումով, մտազբաղությամբ, դեպրեսիվ հակազդումներով, ուշադրության ցրվածությամբ, ինչպես նաև սթրեսային իրավիճակներում՝ անկայունությամբ:

Նեյրոտիցիզմին համապատասխանում է հուզականությունը, իմպուլսիվությունը, շփման մեջ՝ նյարդայնացվածությունը, հետաքրքրությունների փոփոխականությունը, անվստահությունը սեփական ուժերի մեջ, ընդգծված զգայունակությունը, տպավորվողականությունը և գրգռվողականությունը:

Նեյրոտիցիզմի սանդղակի բարձր ցուցանիշներով անձնավորությանը բնորոշ են անհամարժեք ուժեղ հակազդումներ: Այդ իսկ պատճառով այս սանդղակով բարձր ցուցանիշներ դրսևորած անձանց մոտ մեծ հավանականությունը, որ սթրեսային իրավիճակներում նրանց մոտ կարող են զարգանալ տարաբնույթ ներոզներ:

3) **Փսիխոտիզմ:** Այս սանդղակը խոսում է անձի մոտ այնպիսի հակումների մասին ինչպիսիք են՝ ասոցիալ վարքը, հուզական հակազդումների անհամարժեքությունը, բարձր կոնֆլիկտայնությունը, էգոցենտրիկությունը, էգոիզմը և անտարբերությունը: Այս սանդղակով 10-ից ավել բալ հավաքած անձանց նպատակահարմար չէ աշխատել այպիսի ոլորտներում որտեղ պահանջվում է անընդհատ շփում այցելուի հետ:

Համաձայն Հ.Այգենկի, էքստրավերսիայի և նեյրոտիցիզմի բարձր ցուցանիշները համապատասխանում են հիստերիայի հոգեբուժական ախտորոշմանը, իսկ ինտրովերսիայի և նեյրոտիցիզմի բարձր ցուցանիշները՝ տագնապայնությանը կամ ռեակտիվ դեպրեսիային:

Նեյրոտիցիզմի և փսիխոտիզմի արտահայտվածությունը հասկացվում է որպես «նախատրամադրվածություն» համապատասխան տեսակի ախտաբանությունների նկատմամբ:

Հիմնվելով ԲՆԳ¹ ֆիզիոլոգիայի տվյալների վրա, Հ.Այգենկը առաջ է քաշել այն հիպոթեզը, որ պավլովյան «ուժեղ» և «թույլ» տիպերը շատ մոտ են անձի «էքստրավերտ» և «ինտրավերտ» տիպերին: Ինչպես նաև, հիմնվելով «էքստրավերսիա-ինտրավերսիա» և «նեյրոտիցիզմ» սանդղակների տվյալների վրա կարելի է դորս բերել խառնվածքի չորս հիմնական տիպերը, որոնք նկարագրել է Ի.Պավլովը²: Դրանք են՝ սանգվինիկ (ուժեղ, հավասարակշռված, շարժուն), խոլերիկ (ուժեղ, անհավասարակշռված, շարժուն), ֆլեգմատիկ (ուժեղ, հավասարակշռված, իներտ), մելանխոլիկ (թույլ, անհավասարակշռված, իներտ):

Սակայն քանի որ մաքուր անձնային-խառնվածքային տիպեր իրականում շատ հազվադեպ են հանդիպում, անհրաժեշտություն է առաջանում դրանց առավել մանրամասն դասակարգման: Այդ խնդիրը լուծելու համար Գ.Վ.Սուխոդոլսկին (Գ.В. Суходольский) առանձնացրել է անձի 9 տիպ՝ հիմնվելով այգենկյան և պավլովյան դասակարգումների վրա: Բացի չորս հիմնական տիպերից, նա առանձնացնում է նաև չորս միջանկյալ և մեկ հավելյալ տիպ որոնք կարելի է բացահայտել Այգենկի անձնային հարցարանի օգնությամբ (տես Աղյուսակ 5.):

¹ Բարձրագույն նյարդային գործունեություն

² Ի.Պավլովը խառնվածքային չորս տիպերը առանձնացնում է հիմնվելով ԿՆՀ (կենտրոնական նյարդային համակարգ) երեք հիմնական հատկանիշների վրա՝ «ուժ», «հավասարակշռվածություն» և «շարժունություն»:

Աղյուսակ 5. անձնային տիպաբանության մատրիցան ըստ EPQ մեթոդիկայի

| | | «Էքստրավերսիա-ինտրավերսիա» սանդղակ | | |
|-----------------------|-------------------------------|------------------------------------|---|--------------------------|
| | | Ինտրավերսիա (< 7 բալլ) | Ամբիվերսիա՝ միջին ցուցանիշներ (7-15 բալլ) | Էքստրավերսիա (> 15 բալլ) |
| «Նեյրոտիցիզմ» սանդղակ | Նեյրոտիցիզմ (> 16 բալլ) | Մ | ՄԻ | Ի |
| | Միջին ցուցանիշներ (8-16 բալլ) | ՖՄ | Մ | ԻՍ |
| | Կայունություն (< 8 բալլ) | Ֆ | ՍՖ | Ս |

Տվյալ մատրիցայի օգնությամբ դժվար չէ որոշել հետազոտվողի պատկանելիությունը այս կամ այն խառնվածքային տիպին:

Անձնային յուրաքանչյուր տիպին բնորոշ են հետևյալ արտաքին դրսևորումները.

1. Խոլերիկ (Ի) – ագրեսիվ, բռնկվող, իմպուլսիվ:
2. Խոլերիկա-սանգվինիկային (ԻՍ) տիպ – լավատես, ակտիվ, էքստրավերտային, շփվող, հասանելի:
3. Սանգվինիկ (Ս) – ասոդ-խոսող, արագ հակազդող, անկաշկանդ, կենսառատ.
4. Սանգվինիկա-ֆլեգմատիկային (ՍՖ) տիպ – անհոգ, առաջնորդող, կայուն, հանգիստ, հավասարակշռված.
5. Ֆլեգմատիկ (Ֆ) – հուսալի, ինքնատիրապետման բարձր մակարդակ, խաղաղասեր, կշռադատող:
6. Ֆլեգմատիկա-մելանխոլիկային (ՖՄ) տիպ – ջանասեր, պասիվ, ինտրավերտ, սուսիկ-փուսիկ, չշփվող:
7. Մելանխոլիկ (Մ) – զուսպ, վատատես, սթափ, ռիզիդ:
8. Մելանխոլիկա-խոլերիկային (ՄԻ) տիպ - բարեխիղճ, կամակոր, ներոտիկային, նեղացկոտ, անհանգիստ:

Խառնվածքի չորս հիմնական տիպերի կրճատ նկարագրությունը

1) «Մաքուր» **սանգվինիկը** արագ հարմարվում է նոր պայմաններին, շփվող է և արագ ընդհանուր լեզու է գտնում մարդկանց հետ: Զգացմունքներն արագ ծնվում և փոփոխվում են, իսկ հուզական ապրումները, որպես կանոն, խորը չեն: Դիմախաղը հարուստ է, շարժուն և արտահայտիչ: Փոքր ինչ սնդիկ է, կարիք է զգում նոր տպավորությունների, բավարար չափով չի կարողանում կարգավորել սեփական մղումները, չի կարողանում հետևել մշակված օրակարգին թե կյանքում և թե աշխատանքում:

Այդ իսկ պատճառով էլ չի կարողանում արդյունավետ կերպով ի կատար ածել այն աշխատաքը, որը որ պահանջում է երկարատև և մեթոդական լարվածություն, ուշադրության կայունություն, ջանասիրություն և համբերություն: Լուրջ նպատակների, խորը մտքերի և ստեղծագործական գործունեության բացակայության դեպքում նման անձանց մոտ զարգանում են մակերեսայնություն և անկայունություն (непостоянство):

2) **խուլերիկը** աչքի է ընկնում բարձր գրգռվողականությամբ, գործողությունները՝ ընդհատվողականությամբ: Նրան բնորոշ են շեշտակի և կտրուկ շարժումներ, ուժ, իմպուլսիվություն, հուզական ապրումների վառ դրսևորում: Անհավասարակշռվածության արդյունքում՝ տարվելով գործով, հակում ունի գործելու ամբողջ ուժով, որի հետևանքով էլ ծախսում է ավելի շատ ուժ քան պահանջվում է:

Հասարակական հետաքրքրությունների առկայության դեպքում խուլերիկը դրսևորում է նախաձեռնողականություն, սկզբունքայնություն և ժրաջանություն:

Հոգևոր կյանքի բացակայության դեպքում խուլերիկի խառնվածքում հաճախ դրսևորվում է գրգռվողականություն, աֆֆեկտիվություն, անզսպվածություն, բռնկունություն, հուզական իրավիճակներում՝ ինքնավերահսկման անկարողություն:

3) **Ֆլեգմատիկին** բնորոշ է վարքային ակտիվության համեմատաբար ցածր մակարդակ, որի նոր ձևերը մշակվում են դանդաղ, բայց լինում են կայուն:

Ֆլեգմատիկը դանդաղաշարժ և հանգիստ է գործողություններում, դիմախաղում և խոսքում, ինչպես նաև աչքի է ընկնում զգացմունքների և տրամադրության խորությամբ և մշտականությամբ (постоянством):

Նա հետևողական և ջանասեր աշխատող է, հազվադեպ է իր ավերից դուրս գալիս, հակված չէ աֆֆեկտների: Հաշվարկելով սեփական ուժերը՝ գործը հասցնում է իր ավատին, հարաբերություններում հավասարակշռված է, չափավոր շփվող է, չի սիրում դատարկաբանել: Տնտեսում է ուժերը, հենց այնպես չի վատնում դրանք: Կախված իրավիճակից՝ ֆլեգմատիկը մի դեպքում կարող է բնութագրվել «դրական» անձնային գծերով, ինչպիսիք են տոկունությունը, մտքերի խորությունը, հուսալիությունը, հիմնավորվածությունը և այլն, իսկ մեկ այլ դեպքում այլ հատկանիշներով ինչպիսիք են՝ ընդհանուր թուլությունը, ասթենիան, կամազրկությունն ու ալարկոտությունը, հույզերի աղքատությունն ու թույլ արտահայտվածությունը, միայն սովորություն դարձած գործողությունների իրագործման միտվածությունը:

4) **Մեղանխողիկի** մոտ հակազդումները հաճախ չեն համապատասխանում գրգռիչի ուժին. հաճախ առկա է զգացմունքների խորություն և կայունություն նույնիսկ դրանց թույլ արտահայտման դեպքում: Մեղանխողիկը դժվարությամբ է կենտրոնանում որևէ բանի վրա: Ուժեղ ազդեցությունները հաճախ վերջինիս մոտ առաջ են բերում հարատև արգելակման հակազդում («թևաթափ» է լինում): Նրան բնորոշ է մոտորիկայի և խոսքի զսպվածությունն ու խլացվածությունը, ինչպես նաև ամոթխածությունը, ամաչկոտությունն ու нерешительность:

Նորմալ պայմաններում մեղանխողիկը խորը, բովանդակալից մարդ է, կարող է շատ լավ աշխտող լինել, արդյունավետ կերպով լուծել կենսական խնդիրները: Իսկ անբարենպաստ պայմաններում կարող է վերածվել ներփակված, երկչոտ, տագնապային, ранимого մարդու, որը հակված է ծանր ներքին ապրումների նույնիսկ այնպիսի կենսական իրավիճակներում որոնք դրան արժանի չեն:

Այգենկի անձնային հարցարանը

Հրահանգը. Կարդացեք խնդրում ենք ստորևբերված հարցերը և պատասխանեք առանց երկար մտածելու: Հարցերից յուրաքանչյուրին անհրաժեշտ է տալ «այո/+» կամ «ոչ/-» պատասխանը:

1. Դուք տարաբնույթ հոբբիներ ունեք:
2. Դուք նախորոք կշռադատում եք այն ինչ պատրաստվում եք անել:
3. Ձեզ մոտ հաճախ են լինում տրամադրության անկումներ և բարձրացումներ:
4. Դուք երբևէ փորձել եք գովասանքի արժանանալ մի բանի համար, որն իրականում արել էր ուրիշ մարդ:
5. Դուք ասող-խոսող մարդ եք:
6. Ձեզ կանհանգստացնեն այն փաստը, եթե պարտքերի մեջ խրվեցիք:
7. Պատահել է որ Ձեզ դժբախտ զգաք առանց որևէ հատուկ պատճառի:
8. Երբևէ պատահել է որ ժլատություն անեք որպեսզի ստանաք ավելի քան Ձեզ հասնում էր:
9. Դուք հիմնավոր կերպով եք փակում դուռը գիշերը քնելուց առաջ:
10. Համարում եք Ձեզ կենսախիճ մարդ:
11. Տեսնելով թե ինչպես է տառապում երեխան կամ կենդանին, Դուք շատ կվհատվեցիք:
12. Դուք հաճախ եք մտահոգվում այն բանի համար որ ինչ-որ բան այնպես չեք ասել կամ արել:
13. Միշտ եք կատարում Ձեր խոստումները, նույնիսկ եթե դա Ձեզ համար շատ անհարմար է լինում:
14. Հաճույք կստանայիք անկարգելով (парашю) վայր իջնելուց:
15. Ունակ եք ազատություն տալ Ձեր զգացմունքներին և լիաթոք ուրախանալ աղմկոտ ընկերախմբում:
16. Դուք դյուրագրգիռ եք:
17. Դուք երբևէ մեղադրել եք որևէ մեկին մի արարքի մեջ, որի իրական մեղավորը հենց Դուք եք եղել:
18. Ձեզ դուր է գալիս նոր մարդկանց հետ ծանոթանալ:
19. Դուք հավատում եք ապահովագրության օգտակարությանը:
20. Ձեզ հեշտ է վիրավորել:
21. Ձեր բոլոր սովորություններն են լավը և ընդունելի:
22. Հասարակության մեջ գտնվելիս փորձում եք սովորում/աննկատ մնալ:
23. Կօգտագործեցիք այնպիսի միջոցներ որոնք որ Ձեզ կբերեին վտանգավոր կամ արտասովոր վիճակների (ալկոհոլ, թմրանյութ):
24. Հաճախ եք այնպիսի զգացում ունենում որ կարծես ամեն ինչ արդեն հոգնեցրել է/զզվեցրել է:
25. Պատահել է որ վերցնեք ուրիշին պատկանող իրը, թեկուզ լինի դա այնպիսի մանրուք ինչպիսին է հասարակ քորոցը կամ կոճակը:

26. Ձեզ դուր է գալիս հաճախակի հյուր գնալը և մարդկանց շրջապատում գտնվելը:
27. Ձեզ հաճույք պատճառում է վիրավորել նրանց ում որ սիրում եք:
28. Ձեզ հաճախ է անհանգստացնում մեղավորության զգացումը:
29. Պատախել է որ խոսեք այնպիսի թեմայի շուրջ որից իրականում այդքան էլ լավ գլուխ չեք հանում:
30. Դուք սովորաբար գերադասում եք գրքերը՝ մարդկանց հետ հանդիպումներից:
31. Դուք բացահայտ թշնամիներ ունեք:
32. Դուք Ձեզ նյարդային մարդ համարում եք:
33. Միշտ եք ներողություն խնդրում եթե պատահում է կոպտել ինչ-որ մեկին:
34. Դուք շատ ընկերներ ունեք:
35. Ձեզ դուր է գալիս այնպիսի կատակներ անել, որոնք իրականում երբեմն կարող են որ ցավ պատճառել մարդկանց:
36. Դուք անհանգիստ մարդ եք:
37. Մանուկ հասակում Դուք առանց բողբոջելու և հապաղելու կատարում էիք այն ինչ որ Ձեզ կարգադրում էին:
38. Ձեզ անհոգ մարդ համարում եք:
39. Շատ եք կարևորում լավ/զեղեցիկ վարքուբարքն ու մաքրասիրությունը:
40. Անհանգստանում եք արդյոք այնպիսի սարսափելի իրադարձությունների պահով, որոնք կարող էին տեղի ունենալ, սակայն տեղի չունեցան:
41. Պատահել է որ կորցնեք կամ կոտրեք ուրիշի իրը:
42. Ծանոթության ժամանակ Դուք առաջինն եք նախաձեռնություն ցուցաբերում:
43. Կարող եք արդյոք հեշտությամբ հասկանալ դիմացինի հոգեվիճակը, եթե նա Ձեզ հետ կիսվում է իր հոգսերով:
44. Հաճախ է լինում այնպես որ կարծես Ձեր նյարդերը մինչև վերջ ձգված են/լարված են:
45. Կնետեք արդյոք անպետք թղթի կտորը հատակին/գետնին եթե մոտակայքում չկա աղբարկղ:
46. Մարդկանց շրջապատում գտնվելիս Դուք մեծամասամբ լռում եք:
47. Գտնում եք որ ամուսնությունն արդեն հնաժճ է, և որ այն անհրաժեշտ է վերացնել:
48. Դուք երբեմն զգում եք խղճահարություն ինքներդ ձեր նկատմամբ:
49. Երբեմն Դուք շատ եք ինքներդ Ձեզ գովում:
50. Դուք հեշտությամբ կարող եք աշխուժություն մտցնել տխուր ընկերախմբում:
51. Զգուշավոր վարորդները Ձեզ նյարդայնացնում են:
52. Դուք անհանգստացած եք Ձեր առողջության համար:
53. Երբևիցե վատը խոսել եք այլ մարդու մասին:
54. Դուք սիրում եք Ձեր ընկերներին, ծանոթներին պատմել ուրիշներից լսված կատակներ և անեկդոտներ:
55. Ուտելիքների մեծ մասը Ձեզ համար միևնույն համն ունի:
56. Ձեզ մոտ երբմեն լինում է վատ տրամադրություն:
57. Դուք երբևէ փոքր հասակում հակաճառել եք Ձեր ծնողներին:
58. Ձեզ դուր է գալիս մարդկանց հետ շփվել:
59. Դուք մտահոգվում եք եթե իմանում եք որ աշխատանքում սխալ եք թույլ տվել:
60. Տառապում եք անքնությամբ:

61. Ուտելուց առաջ միշտ եք ձեռքերը լվանում:
62. Դուք այն մարդկանցից եք ով որ ամեն ինչի պատրաստի պատասխանն ունի:
63. Դուք նախընտրում եք գալ հանդիպմանը նշանակված/պայմանավորված ժամից մի փոքր ինչ ավելի վաղ:
64. Պատահում է որ Ձեզ հոգնած և ապատիկ/անտարբեր (апатия) զգաք առանց որևէ պատճառի:
65. Դուք այնքան շատ եք խոսել սիրում որ նոր/անձանոթ մարդու հետ զրուցելու առիթը բաց չեք թողնի :
66. Երբևէ պատահել է որ խարդախություն անեք խաղի ժամանակ:
67. Ձեր մայրը լավ մարդ է/էր:
68. Հաճախ է Ձեզ թվում որ կյանքը չափազանց անհետաքրքիր է:
69. Դուք երբևէ օգտվել եք ուրիշի թույլ տված սխալից՝ Ձեր իսկ նպատակների համար:
70. Հաճախ եք ձեզ վրա վերցնում ավելին (աշխատանք, հոգս) քան կարող է թույլ տալ ժամանակը:
71. Կան մարդիկ որոնք փորձում են Ձեզանից խուսափել:
72. Ձեզ շատ է մահոգում Ձեզ արտաքինը:
73. Դուք միշտ եք բարեհամբույր, նույնիսկ տհաճ մարդկանց հետ:
74. Գտնում եք որ մարդիկ չափազանց շատ ժամանակ են ծախսում սեփական ապագան ապահովելու վրա՝ խնայելով, ետ գցելով գումարներ և ապահովագրելով իրենց ու իրենց կյանքը:
75. Ունեցել եք երբևիցե մահանալու ցանկություն:
76. Դուք կփորձեք խույս տալ հավելյալ գործարքի համար հարկ վճարելուց եթե իմանաք որ Ձեզ երբեք չեն բացահայտի:
77. Դուք կարող եք ուրախացնել, աշխուժացնել ընկերախումբը:
78. Դուք աշխատում եք չկոպտել մարդկանց:
79. Դուք երկար ժամանկ եք մտովի վերապրում տեղի ունեցած տհաճ իրադարձությունը:
80. Դուք երբևիցե պնդել եք որ ամեն ինչ լինի միայն Ձեր ուզածով:
81. Դուք հաճախ եք ավտոկայան, ավտոկանգառ կամ պարզապես կայարան գալիս ամենավերջին վայրկյանին:
82. Դուք այլ մարդու երբևէ դիտավորյալ ասել եք տհաճ կամ վիրավորական բաներ:
83. Ձեզ անհանգստացրել են Ձեր նյարդերը:
84. Ձեզ տհաճ է գտնվել անյախի մարդկանց շրջապատում, որտեղ կատակում են իրենց ընկերների վրա:
85. Դուք հեշտությամբ եք ընկերներ կորցնում Ձեր իսկ մեղավորությամբ:
86. Դուք հաճախ եք մենակության զգացում ունենում:
87. Միշտ է որ Ձեր գործերը համընկնում են Ձեր խոսքերի հետ:
88. Ձեզ դուր է գալիս երբեմն կենդանիներին կատակով նեղացնելը:
89. Դուք հեշտությամբ եք նեղանում այնպիսի դիտողություններից, որոնք որ վերաբերվում են անձամբ Ձեզ կամ ձեր աշխատանքին:
90. Կյանքն առանց որևէ վտանգի կթվար ձեզ չափազանց անհետաքրքիր:
91. Դուք երբևէ ուշացել եք աշխատանքից կամ ժամադրությունից:
92. Ձեզ դուր է գալիս որ ձեր շուրջը աշխուժություն և իրարանցում է լինում:

93. Դուք ուզում եք որպեսզի մարդիկ Ձեզանից վախենան:
94. Ճիշտ է որ երբեմն Դուք այնքան լի եք էներգիայով որ ամեն ինչ ձեր ձեռքերում ասես վառվում է, իսկ երբեմն էլ շատ թույլ եք:
95. Դուք երբեմն թողնում եք հաջորդ օրվան այն ինչ որ կարելի էր անել այսօր:
96. Ուրիշների համար Դուք ուրախ և կենսառատ մարդ եք:
97. Ձեզ հաճախ են ստեր ասում:
98. Դուք շատ զգայուն եք որոշ երևույթների, իրադարձությունների և առարկաների նկատմամբ:
99. Դուք միշտ եք պատրաստ ընդունել սեփական սխալները:
100. Ձեզ մոտ երբևե խղճահարություն առաջացրել է թակարդն ընկած կենդանին:
101. Դժվար էր Ձեզ համար լրացնել այս հարցարանը: